ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«10» սեպտեմբերի 2025թ.

ՀՀ, ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ. 2-րդ շենք
Հեռ. (+37412) 27-27-27

«ՀԱՍՄԻԿ ՕՀԱՆՅԱՆ» Ա/Ձ-Ի ՏՆՕՐԵՆ

ՏԻԿԻՆ Հ. ՕՀԱՆՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10-5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի՛ տիկին Օհանյան,

2025թ.-ի ապրիլի 16-ին «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 14-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ՀԱՍՄԻԿ ՕՀԱՆՅԱՆ» Ա/Ձ-ն: Ըստ կնքված «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10-5» ծածկագրով պայմանագրի առաջին մատակարարումը պետք է իրականացվեր պատվերի հիման վրա, որը տրվել է 09.06.2025թ. էլեկտրոնային փոստի պատվերի հայտ ուղարկելու միջոցով: Սույն թվականի հունիսի 23-ին Մատակարարը ներկայացնում է Իրանի <<Բանդար Աբբաս>> նավահանգստում տեղի ունեցած պայթունի և ռազմական գործողությունների մասով մատակարարման անհնարինության և մատակարարման ժամկետների երկարաձգման մասին համապատասխան գրություն, իրավիճակը ներկայացնելով, որպես ֆորս-մաժոր: Գրությամբ տեղեկացնում է նաև, որ ապրանքը գտնվում է ճանապարհին և կմատակարարվի օգոստոսի 20-25-ը ընկած

ժամանակահատվածում՝ կից ներկայացնելով բեռնափոխադրող ընկերության ծանուցումը:

Սակայն, սույն թվականի օգոստոսի 22-ին դուրս գրված A9667279052 հաշիվ ապրանքագրի հիման վրա ապրանքը հանձնվում է Պատվիրատուին, որտեղ բացակայել են հանձնման-ընդունման արձանագրությունը, ակտը, շահագործման ձեռնարկը և որակի հավաստագրերը, որոնք ըստ տեխնիկական բնութագրի և կնքված պայմանագրի դրույթներով պետք է մատակարարվեր ապրանքի հետ միասին: Պատվիրատուի համաձայնությամբ մատակարարին տրվել է ողջամիտ 10 աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանության շտկման համար: Պատվիրատուն 03.09.2025 թվականի դրությամբ մատակարարին ուղղված գրությամբ՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում խնդրում է, որ վերջինս ներկայացնի բացակայող փաստաթղթերը: Մատակարարի կողմից 05.09.2025 թվականի դրությամբ ներկայացված փաստաթղթերում առկա էին հետևյալ խախտումները.

1. ապրանքը բերվել էր 22.08.2025թ. առանց ուղեկցող փաստաթղթերի, իսկ 05.09.2025թ. բերված փաստաթղթերում ակտ ու արձանագրությունը ներկայացվել է 22.08.2025թ. թվագրությամբ,
2. ապրանքի տեխնիկական բնութագրով սահմանված 2.2 Կիլովատտ հզորության փոխարեն բերվել էր 1950Վոլտ-Ամպեր, այսինքն՝ 1,56Կիլովատտ, հզորությամբ (համաձայն սարքի շահագործման ձեռնարկի)՝ խախտելով կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը և կնքված պայմանագրի 2.1.7.1-ի (ա) ենթակետը:

Պատվիրատուն 10.09.2025թ. ներկայացրած գրությամբ պահանջել է Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը՝ 28 800 ՀՀ դրամը, որի հաշվարկը երևում է ներկայացված գրությամբ:

Բացի այդ, Մատակարարի կողմից իրականացված ապրանքի հանձման-ընդունման ընդունման գործընթացն իրականացվել է որոշակի խախտումներով.

1. խախտվել է պայմանագրով սահմանված 2.1.1 կետը, մասնավորապես մատակարարման ժամկետները խախտվել են 10 օր ավել ժամկետով:

Ապրանքը լիարժեք մատակարարվել է 13-րդ օրը, ընդ որում՝ բացակայել են ապրանքի հանձնման-ընդունման արձանագրությունը և ակտը, որը պետք է ներկայացված լիներ 03.09.2025 թվականին մատակարարին ուղղված փաստացի գրությամբ 2 աշխատանքային օրվա մեջ՝ 05.09.2025թ.-ից, այնինչ այն ներկայացված է 22.08.2025թ. դրությամբ՝ Մատակարարի կողմից հաշիվ ապրանքագրի դուրս գրման, սակայն առանց ակտ ու արձանագրության ապրանքի ոչ ամբողջական կոմպլեկտով ներկայացման դեպքում,

2. խախտել է կնքված պայմանագրի 2.1.2 (ա) կետը, մասնավորապես մատակարարվել է տեխնիկական բնութագրի ոչ համապատասխան ապրանք: Արդյունքում ողջամիտ ժամկետում՝ 09.09.2025թ. մատակարարված վերջնական ապրանքը չի համապատասխանել տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին, այն է՝ տեխնիկական բնութագրով պահանջվել է 2.2ԿՎՏ հզորությամբ սարքավորում, փոխարենը մատակարարվել է 1.95 ԿՎՏ հզորությամբ ապրանք:

Արդյունքում Մատակարարի կողմից թույլ են տրվել Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետերով նախատեսված Պայմանագրի էական խախտումներ:

«ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10-5» ծածկագրով պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետի (ա) ենթակետի համաձայն՝ կնքված պայմանագիրը համարվում է միակողմանի լրիվ լուծված, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի էական խախտում է համարվում եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ

գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք 2 բանկային օրվա ընթացքում «Այ Դի բանկ» ՓԲԸ-ի 11813017106900 հաշվեհամարին փոխանցել որակավորման ապահովման՝ 135 000 ՀՀ դրամի և պայմանագրի ապահովման 90 000 ՀՀ դրամի չափով գումարները, ընդամենը՝ 225 000 ՀՀ դրամ և վճարման կտրոնները ներկայացնել ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգողին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Գ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ